



Գալուստ Կիւլպէնկեան Զիմարկութեան Զայկական Բաժանմունքը 170 հազար ամերիկեան տոլար կը յատկացնէ լիբանանի հայկական դպրոցներուն

Գալուստ Կիւլպէնկեան Զիմարկութեան Զայկական Բաժանմունքը 170 հազար ամերիկեան տոլարի գումար մը կը յատկացնէ Լիբանանի մէջ գործող 18 դպրոցներուն: Այս նուիրատութեան ծիրէն ներս, նպաստ մը կը տրամադրուի նաեւ յատուկ կարգավիճակ ունեցող երեխաներ հոգացող թռչնոց Բոյն հաստատութեան:

Անցնող քանի մը ամիսներուն ընթացքին Լիբանանը կրկին անգամ յայտնուեցաւ քաղաքական, ընկերային եւ տնտեսական ծանր վիճակի մէջ: Գալուստ Կիւլպէնկեան Զիմարկութեան Զայկական Բաժանմունքը մօտէն հետեւեցաւ եւ կը շարունակէ հետեւիլ Լիբանանի քաղաքական եւ տնտեսական դաշտի զարգացումներուն, քաջ գիտակցելով, որ երկրին մէջ տեղի ունեցող բոլոր վերիվայրումները իրենց ուղղակի անդրադարձը ունին նաեւ հայ համայնքին եւ դպրոցին վրայ:

2019-ի կիսուն, Զիմարկութեան Զայկական Բաժանմունքը հրատարակեց Լիբանանահայ գաղութի կրթական կեանքին առնչուող իր [նազմավարութիւնը](#) Գպրոցական վերամուտին յաջորդելիք ծրագիրներուն մեկնարկը քանի մը ամիսով յետաձգուեցաւ՝ Լիբանանի մէջ տիրող տագնապին պատճառաւ:

Ուղղակիօրէն դպրոցներուն փոխանցուած գումարները սահմանուեցան ըստ իւրաքանչիւր հաստատութեան աշակերտութեան եւ ուսուցչական կազմի թիւերուն, ինչպէս նաեւ՝ Զիմարկութեան Զայկական Բաժանմունքի Լիբանանի ներկայացուցիչին եւ դպրոցներու ղեկավարներուն միջեւ տեղի ունեցած հանդիպումներուն ընթացքին ընդգծուած հարցերուն:

Զայկական Բաժանմունքի տնօրէն՝ Դոկտ. Ռազմիկ Փանոսեան այս առիթով ըսաւ, որ «դպրոցները համայնքին ապագան են: Կրթական ծրագիրներու կողքին անոնք ունին կենցաղային եւ առօրեայ հսկայական ծախսեր, որոնք այս դժուար օրերուն առաջնային կը դառնան: Ներկայ յատկացումները չեն փոխարիներ մեր նազմավարութեան ծրագիրները, այլ՝ համեստ եւ անյետաձգելի նեցուկ մը կը հանդիսանան լիբանանահայ դպրոցին, հաստատելով Գալուստ Կիւլպէնկեան Զիմարկութեան համագործակցութիւնը կրթական հաստատութիւններուն հետ»:

Դոկտ. Փանոսեան Փետրուար ամսուն պիտի այցելէ Լիբանան եւ հանդիպումներ պիտի ունենայ կրթական ոլորտի ներկայացուցիչներուն հետ՝ արժեւորելու համար նազմավարութեան մէջ տեղ գտած ծրագիրներուն ընթացքը եւ ուրուագծելու Զիմարկութեան ապագայ քայլերը Լիբանանի մէջ: